

ՑԱՆԿ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն,
2. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն,
3. «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՁԷԿ)» բաց բաժնետիրական ընկերություն,
4. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերություն,
5. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,
6. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերություն (Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով կատարվող գնումների մասով):

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

1. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ցանկում ընդգրկված հանրային կազմակերպությունների (այսուհետև՝ Հանրային կազմակերպություններ) գնումների կարգերի նկատմամբ լրացուցիչ պահանջները (այսուհետև՝ Լրացուցիչ պահանջներ) ենթակա են պարտադիր կիրառման բոլոր այն դեպքերում, երբ գնումների արդյունքում կատարված ծախսերը (ներդրումները) ամբողջությամբ կամ մասնակիորեն առնչվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) կողմից կարգավորվող ծառայություններին:
2. Հանրային կազմակերպությունները գնումները կազմակերպում և իրականացնում են համաձայն իրենց կողմից հաստատված գնումների կարգերի՝ ինքնուրույն, առանց կողմնակի կազմակերպությունների ներգրավման: Գնումների կարգերը համապարփակ նկարագրում են գնումների գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը:
3. Հանրային կազմակերպություններն իրենց կողմից հաստատված գնումների կարգերը և հետագայում դրանցում կատարված փոփոխություններն ու լրացումները գրությամբ ներկայացնում են Հանձնաժողով:
4. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝
 - 1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:
 - 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:
 - 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

5. Հանրային կազմակերպությունները գնումներ կատարելիս պարտավոր են անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել գնումների գործընթացին մասնակցելու ցանկություն հայտնաձ բոլոր անձանց նկատմամբ:

6. Գնումներ կատարելիս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ հնարավորինս մեծ թվով մասնակիցներ ներգրավելու համար՝ բացառելով որակավորման այնպիսի չափանիշների ու բնութագրերի, գնումների այնպիսի տեսականու, քանակների ու պատվերների կատարման այնպիսի ժամկետների, վճարման այնպիսի պայմանների սահմանումը, որոնք կրում են խտրական բնույթ, ստեղծում են հակամրցակցային միջավայր կամ սահմանափակում են մրցակցությունը՝ առանց համապատասխան հիմքերի առկայության խոչընդոտելով կամ սահմանափակելով որևէ անձի՝ գնումներին մասնակցելու իրավունքը: Այդ նպատակով՝

1) հաշվի են առնվում բոլոր հանգամանքները, հատկապես, պայմանագրի բարդությունը, երբ սահմանվում են մրցակցային գործընթացների իրականացման ժամկետները.

2) գնման առարկայի բնութագրերը՝

ա. մրցակցության հավասար պայմաններ են ապահովում հնարավոր մասնակիցների համար.

բ. բացառում են գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը.

գ. օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

դ. ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը.

3) գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը.

- 4) Էլնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրա հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողական և (կամ) գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:
- 5) գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի, կամ արտադրողի, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման առարկայի բնութագրումն անհնար է առանց դրանց: Հղումներ կատարելու դեպքում հատկանիշների բնութագիրը պարունակում է «կամ համարժեք» բառերը:
7. Գնումների կատարման ընթացակարգերը պետք է հիմնված լինեն գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք ստանալու սկզբունքի ապահովման վրա: Անկախ որևէ հանգամանքից, մինչև գնումների իրականացումը հանրային կազմակերպությունները պետք է կատարեն շուկայի ուսումնասիրություններ, որոնց (ոչ վաղ, քան նախորդ օրացուցային տարում իրականացված) արդյունքները պետք է գրանցվեն ընկերության կողմից և դառնան գնման գործարքի վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս, և յուրաքանչյուր դեպքի համար հիմնավորեն գնումների ընթացակարգի ընտրությունը: Գնումների կատարման նախըտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում: Գնումները կարող են կատարվել նաև մեկ անձից՝ բանակցությունների միջոցով, հետևյալ դեպքերում՝

- 1) ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.
 - 2) անհրաժեշտ է իրականացնել տարածքի վարձակալության կամ օգտագործման, էլեկտրական էներգիայի, բնական գազի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների գնում.
 - 3) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.
 - 4) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, տեխնոլոգիական ամբողջականությունը համալրող խմբաքանակներ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ.
 - 5) Հանրային կազմակերպությունների գնումների կարգերով սահմանված այլ դեպքերում, եթե դրանք չեն հակասում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին:
8. Գնումները պատշաճ կազմակերպելու նպատակով Հանրային կազմակերպությունում ձևավորվում է համապատասխան մարմին (ստորաբաժանում, գնումների և մրցութային հանձնաժողով, աշխատանքային խումբ և այլն)՝ ներգրավելով այնպիսի մասնագետների, ովքեր ունակ են կազմակերպելու և ընդունելու որոշումներ՝ տվյալ գնման գործընթացն իր նպատակին համապատասխան իրականացնելու համար: Նշված մարմնի աշխատանքների համակարգումն իրականացնում է Հանրային կազմակերպության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը: Սույն կետը չի սահմանափակում գնման գործընթացի իրականացման վերաբերյալ խորհրդատվության տրամադրման նպատակով

անկախ փորձագետներ (խորհրդատուներ) ներգրավելու՝ Հանրային կազմակերպությունների իրավունքը՝ պայմանով, որ այդ անձինք լիազորված չեն լինի կայացնել գնումների գործընթացին առնչվող որոշումներ:

9. Հանրային կազմակերպությունները պարտավոր են բացառել գնման գործընթացի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավված իրենց ներկայացուցչի և գնման գործընթացին մասնակցող անձանց միջև շահերի բախումը: Հանրային կազմակերպություններն այդ նպատակով գնման գործընթացում ներգրավված իրենց ներկայացուցիչների համար սահմանում են վարվեցողության այնպիսի կանոններ, համաձայն որոնց՝ նշված անձինք շահերի բախման պարագայում անմիջապես տեղեկացնում են Հանրային կազմակերպություններին: Շահերի բախման դեպքում Հանրային կազմակերպությունները իրենց ներկայացուցչին զրկում են տվյալ գնումների գործընթացին առնչվող որոշումներ կայացնելու իրավասությունից: Շահերի բախում է համարվում ցանկացած հարաբերություն, որը կարող է նպաստել Հանրային կազմակերպությունների ներկայացուցչի կողմից գնումների գործընթացին մասնակցող անձի օգտին կամ դեմ գործողություններ կատարելուն կամ որոշումներ կայացնելուն:
10. Գնումների գործընթացին մասնակցող անձանց ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:
11. Գնումների գործընթացի հետ կապված Հանրային կազմակերպությունների բոլոր որոշումները և գործողությունները փաստաթղթավորվում են առնվազն 5 տարի պահպանման ժամկետով:
12. Հանրային կազմակերպությունները կատարված գնումների մասին սահմանված կարգով հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով:
13. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Հանրային կազմակերպությունները տարեկան հաստատված բյուջեի (միայն լիցենզավորված գործունեության մասով) հիման վրա կազմում են գնումների պլան: Գնումների պլանը պարունակում է գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մասին ընդհանուր տեղեկատվություն, այդ թվում՝ գնման առարկայի անվանումը (մրցույթով իրականացվող գնումների դեպքում՝ նաև առանձին լոտերի անվանումները), հատկանիշները (բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը և

հնարավորություն տալով մասնակիցներին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան), քանակական բնութագրիչները, գնման ձևը, ընտրված գնման ձևի կիրառման իրավական հիմքը և գնման ժամանակացույցը: Յուրաքանչյուր տարի՝ մինչև փետրվարի 15-ը, Հանրային կազմակերպություններն իրենց պաշտոնական կայքում և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում հրապարակում են ((XLS (իքսել), XLSX (էքսելիքս) կամ ODS (օդիես) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode տառատեսակով) տարեկան հաստատված բյուջեի հիման վրա կազմված գնումների պլանը՝ նշելով հրապարակման ամսաթիվը, Հանրային կազմակերպության անվանումը և գնումների պլանի տարեթիվը:

Փոփոխությունների դեպքում գնումների պլանի լրամշակված տարբերակը ենթակա է վերահրապարակման հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

14. Հանրային կազմակերպությունների կողմից հաստատված գնումների կարգերը, գնման գործընթացների կազմակերպման մասին հայտարարությունները, հրավերները, գնումների բազային միավորը (մեկ մլն դրամ) գերազանցող՝ կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները տեղադրվում են պաշտոնական կայքում և հրապարակվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում:

15. Հանձնաժողովի հաստատած կարգով մոնիթորինգի իրականացման արդյունքում Հանրային կազմակերպությունների կողմից սույն Լրացուցիչ պահանջների խախտման փաստի հաստատման դեպքում կատարված գնումների ընթացքում ձևավորված ծախսերը (ներդրումները) կարող են համարվել չհիմնավորված և սակագների հաշվարկման ընթացքում փոխհատուցվել մասնակիորեն: